Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 ապրիլի 2006 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Տրտմահաղորդ այս օրը Երկնավոր Թագավոր մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ, Սուրբ և Մեծ Մատնության և Չարչարանքների հիշատակն է: Երկնավոր Թագավորը երկրավոր Իր վերջին օրերին Իր վերջին պատգամները տվեց Իր աշակերտներին և պատրաստվեց խաչելության, ապա՝ մահվան, հետո՝ թաղման, իսկ վերջում՝ շռնդալից Հարության:

Զարմանալի է ու գեղեցիկ, որ մատնությունն էլ մեր հայրերը կոչել են սուրբ և մեծ, բայց այդ ոչ թե Հուդայի վարմունքն է, այլ՝ Հիսուսի սրբագործումն այդ արարքի հանդեպ: Ընթերցվեցին ավետարանական վեց պատումներ, և մենք ուշիուշով հետևեցինք այդ պատմությանը, իսկ այժմ անդրադառնանք այդ պատմության բուն հոգևոր իմաստին՝ խորհրդին:

Սովոր էր մարդկությունը տիեզերական պատմությունից, որ չաստվածները չաստվածների հանդեպ դավադրություններ ու մատնություններ էին պատրաստում, ապա կախաղաններ, բանտարկություններ ու սպանություններ: Հայր չաստվածն անխիղճ էր իր որդիների հանդեպ, եղբայր չաստվածն անգութ էր իր քույր չաստվածուհու հանդեպ, սակայն այդ ամենը՝ մինչև Հիսուս:

Եվ ահա պատմության մեջ տիեզերքի մի փոքրիկ անկյունում, որչափ էլ մեծ և ահարկու լինի այդ ողբերգությունը, մարդն է դատում, մահապարտ հռչակում, ապա խաչ բարձրացնում ճշմարիտ և միակ Աստծուն:

Ինչպիսի հանդգնություն մարդու կողմից և ինչպիսի հնազանդություն Աստծու կողմից: Դեմ հանդիման են Աստված և մարդ: Մի պահ կանգ է առնում պատմությունը, չի շարժվում ժամանակը, և չի շնչում բնությունը: Հավիտենական Քահանայապետը ժամանակավոր օրենսդիր քահանայապետի դիմաց, Երկնավոր Արքան փոքրիկ մի կուսակալի դիմաց: Եվ ահա պիտի արձակվի վճիռ. մահապարտ է այն մարդը, որ հռչակել էր իրեն Աստծո Որդի:

Վկայել էր Վարդապետն Իր ուսմունքը ճշմարտապես թե՛ տաճարում, թե՛ ամենուր և չէր թաքցրել ոչինչ: Եվ ահա քահանայապետը և կուսակալը վկաներ են փնտրում, որպեսզի վկայություն տան այն մասին, որը Նա ոչ ասել է և ոչ էլ՝ գործել: Արձակվում է դատավճիռը. «... մահապարտ է, պետք է նա դատապարտվի մահվան»: Իրագործվում է դատավճիռը, մահվան է դատապարտվում Երկնավոր Թագավորը՝ ո՞ւմ կողմից. Իր ձեռքով ստեղծված արարածների: Նա, որ քիչ առաջ Գեթսեմանիի պարտեզում հայացքը դեպի երկինք աղոթում էր առ Հայր Աստված, ոչ թե Իր համար, այլ բոլոր նրանց համար, ովքեր Իրեն պետք է դատապարտեին մահվան:

Այն սուրբ ձեռքերը, որ ստեղծեցին մարդկանց, այդ ձեռքերը մարդիկ պարաններով կապեցին, այն շուրթերը, որ օրհնություն ու սաղմոսներ էին տարածում և ճշմարիտ կյանքի վարդապետություն, ստացան նախատինք, թուք և ապտակ: Նա, որ կենդանություն պարգևեց մեռածին, ընթացք՝ անդամալույծին, տեսողություն՝ կույրին, և լսողություն՝ խուլին, կանգնեց մի պահ խլացածների, կույրերի և համրերի առջև, հեզությամբ և խոնարհությամբ տարավ բոլոր ծաղրանքները, որովհետև այդ էր կամքը Երկնային Հոր: Պետք է ըմպեր տխրության, տառապանքի և տանջանքի բաժակը ցմրուր: Այդ էր նախատեսված, այդ էր լինելու Իր երկրային կյանքի ավարտը, և Ինքն էլ վկայում էր խաչից Իր վերջին խոսքով՝»Ամենայն ինչ կատարված է»: Ավանդեց հոգին Երկնավոր Հոր ձեռքերում և Սուրբ Հոգու շնորհների ներքո ավանդ թողեց մեզ մի նոր կյանք: Ահա այդ Հրաշափառ Հարության լույսի շառափներով զարդարված՝ մենք այս օրը կոչում ենք Սուրբ, Հրաշափառ և Մեծ Մատնության և Չարչարանքի հիշատակության օր:

Գոտեպնդվենք այդ խորհրդով և ընթանանք ևս երկու քայլ առաջ և ողջունենք Տիրոջ Հարության լույսը: Գոտեպնդվենք սիրով և խաղաղությամբ՝ այն երկու կարևոր պատգամներով, որ Հիսուս արտաբերեց վերջին անգամ. «... մնացե՛ք խաղաղության մեջ, հույսներդ՝ անսպառ, և սերերը ձեր միշտ՝ բարենորոգ»: Ամեն: